

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԵՐԴՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ՎԼԱԴԻՄԻՐԻ

**ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ ԼՂՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և
կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության
թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ազրարային համալսարանում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր
ՍԱՅԱԴ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ
ՊԵՏՐՈՍՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր ԿՈՐՅՈՒՆ ԱՇՈՏԻ
ԳՐԻԳՈՐՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ ՏՈՆԻԿ ԼԵՎՈՆԻ
ՔՈՉԱՐՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2018 թվականի ապրիլի 3-ին, ժամը 14⁰⁰-ին՝ Հայաստանի ազգային ազրարային համալսարանում գործող ԲՈՀ-ի տնտեսագիտության 002 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, Երևան, Տերյան փողոց, 74:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի ազգային ազրարային համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թվականի փետրվարի 28-ին:

002 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԳԻՏ.ՔԱՐՏՈՒՂԱՐ, ԴՈՑԵՆՏ

Վ. Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Համաշխարհային տնտեսության գլոբալացումը հանգեցրել է առանձին երկրների տնտեսություններում վերափոխումների անհրաժեշտության, որոնց դիմամիկան պայմանավորված է տնտեսական աճի տեմպով, որոնք երկրի տնտեսությունում կարող են ապահովված լինել օտարերկրյա ներդրումների ակտիվ հոսքի պայմաններում:

Տնտեսական բարեփոխումների իրականացման տարիներին ԼՂՀ արդյունաբերության համարյա բոլոր ճյուղերը գտնվում էին անմխիթար վիճակում: Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունն էականորեն նվազել էր: Նման իրավիճակ ստեղծվել էր նաև շինարարությունում և տնտեսության մյուս ճյուղերում: Արդյունաբերական ձեռնարկությունների չաշխատելու պատճառներից մեկը հիմնական արտադրական միջոցների մաշվածության բարձր աստիճանն էր, դրանց արտադրողականության նվազումը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրավիճակի վատթարացման հիմնական գործոնը, բնականաբար հանդիսանում է Ղարաբաղյան հիմնահարցը: Արդյունքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հայտնվել է փաստացի տնտեսական շրջափակման մեջ, և տնտեսությունը զարգանում է ճգնաժամային պայմաններում: Առկա է ներդրումների անբավարարություն ոչ միայն ընդլայնված վերարտադրության ապահովման, այլ նաև առկա արտադրական ներուժի օգտագործման առումով: Նման պայմաններում, քանի որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը չունի բավարար ֆինանսական և նյութական ռեսուրսներ, օտարերկրյա ներդրումները դիտարկվում են որպես կարևոր գործոն տնտեսական վիճակի բարելավման և կայունացման համար:

ԼՂՀ տնտեսության վիճակի հետազոտությունը ցույց է տալիս, որ օտարերկրյա ներդրումների ներգրավման համար առկա են մի շարք խնդիրներ, որոնց լուծումը խիստ անհրաժեշտ է՝ երկրի հետագա զարգացման համար: Այդ խնդիրներին են վերաբերում ոչ բարենպաստ ներդրումային միջավայրը, օտարերկրյա ներդրումների ներգրավման ոլորտի ոչ կատարյալ իրավական դաշտը, ֆինանսական և շուկայական ենթակառուցվածքների թերզարգացած լինելը:

Վերոնշյալ խնդիրների կարևորությամբ և դրանց գիտական ուսումնասիրվածության ոչ բավարար մակարդակով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի ընտրությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հետազոտության նպատակն է ԼՂՀ տնտեսության մեջ օտարերկրյա ներդրումների ներգրավման ռազմավարության ու պետական քաղաքականության դրույթների, սկզբունքների և դրանց համապատասխան գիտական հիմնավորումն ու մշակումը, որը կնպաստի ապահովելու երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացումը:

Նշված նպատակների իրագործման համար ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- ուսումնասիրել և վերլուծել ԼՂՀ տնտեսության զարգացման դինամիկան և արդի վիճակը, բացահայտել արտաքին և ներքին գործոնների ազդեցությունը ԼՂՀ տնտեսության զարգացման գործում,
- մշակել ԼՂՀ ներդրումային քաղաքականության հիմնական սկզբունքները, որոնք հիմնավորում են ներդրումների ներգրավումը որպես՝ տնտեսական կայուն աճի ապահովման և բնակչության կենսամակարդակի բարձրացման գործոն,
- բացահայտել օտարերկրյա ներդրումների ներգրավման բնագավառում առկա ռիսկերը և առաջադրել դրանց կառավարման ուղղությունները,
- հաշվարկել օտարերկրյա ներդրումների սոցիալ-տնտեսական արդյունավետությունը՝ ԼՂՀ-ում գործող կոնկրետ կազմակերպության օրինակով,
- բացահայտել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում օտարերկրյա ներդրումների ներգրավման ոլորտում առկա հիմնախնդիրները,
- առաջադրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում օտարերկրյա ներդրումների ներգրավման հիմնական ուղղություններն ու հնարավորությունները:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության օբյեկտը ԼՂՀ տնտեսությունն է և պետական մարմինների գործունեությունը՝ ուղղված երկրի տնտեսությունում օտարերկրյա ներդրումների ներգրավման խթանմանը և ակտիվացմանը:

Հետազոտության առարկան տնտեսական և կազմակերպարարական հարաբերությունների համալիրն է՝ կապված ԼՂՀ-ում օտարերկրյա ներդրումների ներգրավման և արդյունավետ օգտագործման ապահովմանը՝ որպես երկրի տնտեսական զարգացման կարևոր արտաքին գործոնի:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծման համար հիմք են ծառայել արտասահմանյան և հայ տնտեսագետների աշխատությունները՝ նվիրված միջազգային կապիտալի շարժին և դրանցում օտարերկրյա ներդրումների դերին, որպես մակրոտնտեսական զարգացման կարևորագույն գործոնի, ներդրումային գործընթացի տեսական և մեթոդաբանական հիմքերի և ներդրումային քաղաքականության ձևավորման, ինչպես նաև երկրների միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման հարցերին:

Կիրառվել են հետազոտությանն առնչվող ընդհանուր գիտական մեթոդները՝ ինդուկցիա, դեդուկցիա, դասակարգումներ, համեմատություններ, ընդհանրացումներ, խմբավորումներ, կառուցվածքային նկարագրության, տրամաբանական և տնտեսամաթեմատիկական մոդելավորման մոտեցումներ:

Հետազոտության համար օգտագործվել են ԼՂՀ օրենսդրական և նորմատիվային ակտերը, ազգային վիճակագրական ծառայության տվյալները, երկրի տնտեսության վիճակի մասին հաշվետվություններն ու վերլուծական տեղեկատվությունները, միջազգային կազմակերպությունների տեղեկագրերը և տեղեկատվական նյութերը: Որպես տեղեկատվական հիմք՝ օգտագործվել են ատենախոսական հետազոտություններում, մենագրություններում, գիտական հոդվածներում, պարբերականներում, հաստատությունների տեղեկատվական և վերլուծական նյութերում առկա տվյալները, տարբեր գիտնականների և հետա-

զուտողների փորձագիտական վերլուծությունները և հետազոտությունները, ինչպես նաև էլեկտրոնային ՁԼՄ-ներում (համացանցում) հրապարակված նյութերը:

Ատենախոսության գիտական նորույթը և հիմնական արդյունքները:

Ատենախոսությունում իրականացված հետազոտություններն ու վերլուծությունները հանգեցրել են մի շարք գիտական արդյունքների, որոնցից գիտական նորույթ կարելի է համարել հետևյալները.

- մշակվել և առաջադրվել են օտարերկրյա ներդրումների ներգրավման ոլորտում 2018-2022թթ. պետական քաղաքականության հայեցակարգային ուղղությունները,

- բացահայտվել են ԼՂՀ տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ներդրումների իրականացման գործում գոյություն ունեցող ռիսկերը և BERI ինդեքսի մեթոդով գնահատվել է ԼՂՀ-ում ներդրումային միջավայրի գրավչությունը,

- գնահատվել է օտարերկրյա ներդրումների սոցիալ-տնտեսական արդյունավետությունը ԼՂՀ-ում գործող կազմակերպության օրինակով,

- բացահայտվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում օտարերկրյա ներդրումների ներգրավման ոլորտում առկա հիմնախնդիրները և առաջադրվել են դրանց լուծման հիմնական ուղղություններն ու հնարավորությունները:

Հետազոտությունների արդյունքների գործնական նշանակությունը:

Ատենախոսության գիտագործնական նշանակությունը կայանում է նրանում, որ այն զարգացնում է հիմնական մոտեցումները հատուկ աշխարհաքաղաքական պայմաններ ունեցող երկրում օտարերկրյա ներդրումների ներգրավման պետական քաղաքականության մշակման համար: Ատենախոսության հիմնական դրույթները կարող են օգտագործվել ներդրումների, մասնավորապես օտարերկրյա ներդրումների ներգրավման ոլորտում կատարվելիք հետագա գիտահետազոտական աշխատանքներում, ինչպես նաև որպես գիտամեթոդական բազա՝ նորմատիվ իրավական փաստաթղթերի, ինչպես նաև համապատասխան պետական քաղաքականության մշակման գործում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Հայաստանի ազգային ազդարային համալսարանի Ազրոպարենային համակարգի էկոնոմիկայի, Ազրոբիզնեսի կազմակերպման և կառավարման ամբիոնների համատեղ նիստում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են վեց գիտական հոդվածներում:

Հետազոտության ծավալը և կառուցվածքը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից: Շարադրված է 142 էջ ծավալով, պարունակում է 14 աղյուսակ և 11 գծապատկեր:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, տեսական, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթն ու հիմնական արդյունքները, հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը, փորձարկումն ու հրապարակումները, հետազոտության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Տնտեսության վիճակը և օտարերկրյա ներդրումները ԼՂՀ-ում» գլխում ներկայացվել են ԼՂՀ տնտեսության վիճակը, մակրոտնտեսական ցուցանիշները, օտարերկրյա ներդրումների իրականացման ծավալները, հիմնավորվել է օտարերկրյա ներդրումների ներգրավման անհրաժեշտությունը: Ներկայացվել են ԼՂՀ բնատնտեսական և աշխարհագրական պայմանները, ագրարային բարեփոխումների գործընթացի առանձնահատկությունները, տնտեսության զարգացման վիճակը, բնակչության զբաղվածության մակարդակը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մակրոտնտեսական ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1-ում:


Աղյուսակ 1.

ԼՂՀ մակրոտնտեսական ցուցանիշները 2011-2015թթ.¹

Ցուցանիշներ	2011	2012	2013	2014	2015
Համախառն ներքին արդյունքը, մլրդ դրամ	135.5	150.0	168.6	188.8	209.3
ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով, հազար դրամ	936.1	1023.0	1137.9	1268.1	1414.3
Արդյունաբերության արտադրանքը, մլրդ դրամ	45.8	40.9	44.3	52.0	53.5
Գյուղատնտեսության արտադրանքը, մլրդ դրամ	39.9	50.3	55.2	57.3	64.3
Շինարարության ծավալը, մլրդ դրամ	43.4	38.3	45.2	50.5	50.1
Առևտրի շրջանառության ծավալը, մլրդ դրամ	95.4	105.0	113.5	116.3	116.3
Արտաքին առևտրաշրջանառությունը, մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝					
արտահանում	79.6	57.7	59.6	64.7	62.1
ներմուծում	313.1	291.2	268.8	302.0	252.4
Սպառողական գների ինդեքսը, %	104.0	103.0	105.9	104.5	100.2
1 դոլարի միջին տարեկան փոխարժեքը, դրամ	372.49	401.79	409.63	415.92	477.92

¹ ԼՂՀ ԱԿԾ պաշտոնական կայք՝ www.stat-nkr.am

ԼՂՀ տնտեսության հիմնական ոլորտների՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության և առևտրի ոլորտների ծավալների դինամիկան պակերված է զծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1. ԼՂՀ տնտեսության հիմնական ոլորտների համախառն արտադրանքների ծավալների դինամիկան 2011-2015թթ.²

Գծապատկերի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ ԼՂՀ տնտեսության հիմնական ոլորտներից առևտրի շրջանառությունը 2011-2015թթ. համեմատաբար ավելի մեծ տեմպերով է աճել, իսկ համեմատաբար ցածր տեմպերով աճել է արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը:

Առաջին գլխի երկրորդ բաժնում ներկայացվել են «ներդրումներ» հասկացության վերաբերյալ տարբեր գիտնականների մեկնաբանություններն ու բնորոշումները, ներդրումների տեսակները, ներդրումային միջավայրը ձևավորող գործոնները, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների ներգրավման և ներդրումային միջավայրի գրավչության վերաբերյալ միջազգային կազմակերպությունների կատարած փորձագիտական հետազոտությունների արդյունքում իրականացված վերլուծությունները:

Ներդրումային միջավայրը ձևավորող բազմաթիվ գործոններ կան, որոնցից առավել կարևորվել և առանձնացվել են հետևյալները.

- երկրի տնտեսության վիճակը և զարգացման դինամիկան,
- սոցիալ-քաղաքական իրավիճակի կայունությունը,
- շուկայական հարաբերությունների և արտադրական, սոցիալական ու շուկայական ենթակառուցվածքների զարգացվածության աստիճանը,
- պետության տնտեսական քաղաքականությունը,
- իրավա-օրենսդրական դաշտի նպաստավորությունը,
- օտարերկրյա կապիտալի ներգրավման պայմանները³:

² www.stat-nkr.am

³ Հովհաննիսյան Ա. ՀՀ ագրարային ոլորտի ներդրումային միջավայրի բարելավման ուղիները: //«Ազրոգիտություն», գիտական ամսագիր N1-2, 2016. -էջ 11

Հայաստանի և ԱՊՀ այլ երկրների վարկանիշները ըստ մրցունակության համաշխարհային ցուցչի ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

Հայաստանի և ԱՊՀ այլ երկրների վարկանիշները ըստ մրցունակության համաշխարհային ցուցչի⁴

Երկիրը	2015-2016թթ. 140 երկրների շարքում	2016-2017թթ. 137 երկրների շարքում	Փոփոխությունը
Ադրբեջան	40	37	+3
Ղազախստան	42	53	-11
Ռուսաստան	45	43	+2
Վրաստան	66	59	+7
Ուկրաինա	79	85	-6
Մոլդովա	84	100	-16
Հայաստան	82	79	+3
Տաջիկստան	80	77	+3
Ղրղզստան	102	111	+9

Հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը առանձին տնտեսական ու քաղաքական միավոր է, սակայն ներդրումային միջավայրի նպաստավորությամբ շատ մոտ է ՀՀ ներդրումային միջավայրին, քանի որ փաստացի երկու հանրապետություններն էլ գործում են մեկ ընդհանուր տնտեսական ու մաքսային տարածքում: Ուստի ԼՂՀ ներդրումային միջավայրի գնահատման համար կարելի է որոշակիորեն հիմնվել ՀՀ ներդրումային միջավայրի վերաբերյալ միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված տվյալների վրա:

Աղյուսակ 3-ում ներկայացված են Մրցունակության 2016-2017թթ. համաշխարհային զեկույցում ՀՀ դիրքի ցուցիչների վերաբերյալ տվյալները:

Աղյուսակի 3-ի տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ 2016-2017թթ. 2015-2016թթ. նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը կտրուկ բարելավել է դիրքերը ինստիտուտների առումով՝ 10, նորարարության՝ 10 և գործարարության կատարելագործվածության առումով՝ 16 կետով, ենթակառուցվածքների առումով պատկերը նույնն է մնացել, իսկ մնացած ցուցիչների գծով դիրքերը բարելավվել է 1-4 կետերով, իսկ դիրքերի կրճատում նկատվել է միայն Մակրոտնտեսական միջավայրի և դրա կայունության ցուցիչի գծով՝ 16 կետով:

Աղյուսակ 3.

⁴ Աղյուսակը կազմվել է Մրցունակության համաշխարհային զեկույցի տվյալներով վ. http://evconsulting.com/sites/default/files/EV_Presentation_16-17.pdf

Մրցունակության համաշխարհային ցուցչի ՀՀ դիրքի ցուցիչների փոփոխություններն ըստ հենասյունների⁵

ՀԱՄ հենասյունները	2015-2016թթ. 140 երկրների շարքում	2016-2017թթ. 138 երկրների շարքում	2016-2017թթ. 2015-2016թթ. նկատմամբ
Ինստիտուտներ	76	66	+10
Ենթակառուցվածք	82	82	0
Մակրոտնտեսական միջավայր	72	88	-16
Առողջապահություն և տարր. կրթություն	95	93	+2
Բարձրագույն կրթություն և որակավորում	72	71	+1
Ապրանքների շուկայի արդյունավետություն	50	45	+5
Աշխատուժի շուկայի արդյունավետություն	58	55	+3
Ֆինանսական շուկայի վիճակը	94	90	+4
Տեխնոլոգիական մակարդակ	75	71	+4
Շուկայի տարրողություն	116	120	+4
Գործարարության մակարդակ	97	81	+16
Նորարարություն	107	87	+10


Տվյալ գլխի երրորդ բաժնում ներկայացվել են ԼՂՀ տնտեսության իրական հատվածում ամբողջական և օտարերկրյա ներդրումների ծավալների դինամիկան և ըստ երկրի շրջանների, կազմակերպությունների ու տնտեսության ոլորտների դրանց ներգրավման փաստացի վիճակն ու դրսևորումները

ԼՂՀ-ում իրականացված ամբողջական և օտարերկրյա ներդրումների կառուցվածքը ներկայացված է գծապատկեր 2-ում:

Ինչպես երևում է գծապատկերից ամբողջական ներդրումների ծավալները 2008 թվականից սկսած աճել են մինչև 2013 թվականը, սակայն ոչ համաչափ, քանի որ դրանց մակարդակը կտրուկ ավելացել է 2011-2012թթ., իսկ 2012-2013թթ. դրանք զգալի չափով նվազել են: Ամբողջական ներդրումների ծավալը 2015

⁵ http://evconsulting.com/sites/default/files/EV_Presentation_16-17.pdf

թվականին 2008 թվականի նկատմամբ ավելացել է 46897.6 մլն ՀՀ դրամով կամ շուրջ 3.2 անգամ: 2012-2013թթ. օտարերկրյա ներդրումների ծավալները կտրուկ նվազել են՝ շուրջ 5.3 անգամ, իսկ հաջորդ տարի նորից նկատվել է կտրուկ աճ, այնուհետև՝ 2015 թվականին նորից արձանագրվել է նվազման միտում:



Գծապատկեր 2. ԼՂՀ-ում իրականացված ամբողջական և օտարերկրյա ներդրումների դինամիկան 2008-2015թթ.⁶

Աղյուսակ 4-ում ներկայացված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսության իրական հատվածում իրականացված ներդրումներն ըստ տնտեսության ոլորտների 2008-2015թթ.:

Աղյուսակի տվյալների վերլուծությունից ակնհայտ է, որ շինարարության և արդյունաբերության ոլորտներում նկատվում է վերջին հինգ տարիների տվյալներով օտարերկրյա ներդրումների կայուն աճ: Արդյունաբերության ոլորտում օտարերկրյա ներդրումների մեծ մասը բաժին է ընկնում հանքարդյունաբերությանը և մշակող արդյունաբերությանը:

Ատենախոսության երկրորդ՝ «Օտարերկրյա ներդրումների ներգրավման հիմնական ուղղություններն ու օրենսդրական հիմքերը ԼՂՀ-ում» գլխում ուսումնասիրվել են օտարերկրյա ներդրումների գրավչության ապահովման օրենսդրական հիքերը, որոնց հիման վրա առաջադրվել են ԼՂՀ-ում օտարերկրյա ներդրումների ներգրավման հիմնական ուղղություններն ու կառուցակարգերը:

Երկրորդ գլխի առաջին բաժնում ներկայացվել է Օրենսդրական բազան, որով կարգավորում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ներդրումային գործընթացը:

Օտարերկրյա ներդրումները ԼՂՀ-ում կարգավորվում են «Օտարերկրյա ներդրումների մասին» ԼՂՀ օրենքով, որով սահմանված են որոշակի արտոնություններ և երաշխիքներ՝ ուղղված ներդրումների աճի խրախուսմանը⁷:

Աղյուսակ 4.

⁶ ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2008-2014թթ., 2009-2015թթ. - էջ 268

⁷ ԼՂՀ օրենքը «Օտարերկրյա ներդրումների մասին» 28.02.1995թ.


ԼՂՀ տնտեսության իրական հատվածում իրականացված օտարերկրյա ներդրումներն ըստ ոլորտների 2008-2015թթ (մլրդ. ՀՀ դրամ)⁸

Ցուցանիշներ	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Ընդամենը ներդրում.	21.1	39.6	46.4	50.2	74.7	64.4	76.9	68.0
Արդյունաբերութ.	9.8	5.1	7.2	12.4	21.6	25.0	40.3	26.8
Գյուղատնտեսութ.	0.1	0.1	0.4	0.4	1.4	1.3	0.9	1.4
Շինարարություն	1.6	7.6	7.9	8.0	7.5	22.2	27.7	23.0
Տրանսպ. և կապ	2.4	3.0	3.8	5.0	6.0	6.5	1.5	11.4
Առևտուր	6.1	7.2	9.4	9.4	1.0	8.1	5.2	-
Այլ	6.6	16.5	17.8	14.9	27.8	1.3	1.2	5.4
որից օտարերկ.	9.9	4.7	4.0	4.1	10.8	2.0	9.8	6.6
Արդյունաբերութ.	7.2	1.3	0.9	0.3	2.4	1.1	1.8	1.9
Գյուղատնտեսութ.	0.1	0.02	0.02	0.02	0.01	-	0.008	0.7
Շինարարություն	0.5	0.2	0.2	0.1	1.6	0.6	8.0	3.5
Տրանսպ. և կապ	0.8	8.4	0.2	0.1	0.3	-	-	0.02
Առևտուր	0.6	0.6	0.5	0.9	0.01	-	-	-
Այլ	0.7	1.8	2.3	2.6	6.3	0.2	0.05	0.6

ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետությունը կարող է սահմանել այն տարածքները, որտեղ, ելնելով ազգային անվտանգության ապահովման պահանջներից, օտարերկրյա ներդրողների և օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունների գործունեությունը սահմանափակվում կամ չի երաշխավորվում:

ԼՂՀ օտարերկրյա ներդրումների մասնաբաժինը ՀՆԱ-ի կառուցվածքում 2004-2015թթ. գրաֆիկական տեսքով ներկայացված է գծապատկեր 3-ում:

⁸ ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2008-2014թթ., 2009-2015թթ. - էջ 268, 262



Գծապատկեր 3. ԼՂՀ-ում օտարերկրյա ներդրումների մասնաբաժինը ՀՆԱ-ի կառուցվածքում 2004-2015թթ.⁹

Վերարտադրվող բնական ռեսուրսների շահագործման իրավունքի վերապահումն օտարերկրյա ներդրողներին իրականացվում է կոնցեսիոն պայմանագրերի հիման վրա, որոնք նրանց հետ կնքվում են ԼՂՀ կառավարության կամ դրա համար լիազորված պետական այլ մարմնի կողմից՝ կոնցեսիաների մասին ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Օտարերկրյա ներդրողների շահույթը՝ հարկերը վճարելուց և օրենսդրությամբ սահմանված այլ վճարումներ կատարելուց հետո, մնում է նրա տնօրինության տակ: Օտարերկրյա ներդրողներն իրավունք ունեն ԼՂՀ բանկերում բացելու ընթացիկ, հաշվարկային կամ այլ հաշիվներ, և իրենց միջոցներն օգտագործել ԼՂՀ ներքին շուկայում արտարժույթ կամ ապրանքներ ձեռք բերելու և այլ գործունեություն ծավալելու նպատակով¹⁰:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում օտարերկրյա ներդրումները կարգավորող օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած՝ 10 տարվա ընթացքում, օտարերկրյա ներդրողի ցանկությամբ, կիրառվում է ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը:

Օտարերկրյա ներդրողները կարող են ներդրումներ իրականացնել ԼՂՀ-ում օտարերկրյա սեփականությամբ ընկերությունների հիմնադրման միջոցով (այդ թվում՝ ներկայացուցչություններ), գոյություն ունեցող ընկերությունների կամ դրանց բաժնետոմսերի գնումով, ինչպես նաև համատեղ ձեռնարկությունների հիմնադրմամբ: Օտարերկրյա ներդրումները ԼՂՀ-ում ազգայնացման ենթակա չեն: Առգրավումը որպես բացառիկ միջոց թույլատրվում է միայն ԼՂՀ օրենսդրությամբ

⁹ ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2009-2015թ, - էջ 26, 268

¹⁰ Адамян С. Налогообложение иностранных инвестиций в Армении, Ер. 2008.

սահմանված արտակարգ դրության պայմաններում՝ դատական վճռով և լրիվ փոխհատուցմամբ:

Ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ բաժնում ԼՂՀ-ում օտարերկրյա ներդրումների ներգրավման հիմնական ուղղություն է դիտարկվել ազատ տնտեսական գոտու ստեղծումը:

Ազատ տնտեսական գոտու ստեղծումը հանդիսանում է ամենալավ պայմանը օտարերկրյա ներդրումների ներգրավման և իրագործման համար, հետևաբար վերջինիս վերաբերյալ համապատասխան հայեցակարգի ընդունումը ԼՂՀ-ում կստեղծի բարենպաստ ներդրումային միջավայր:

Ազատ տնտեսական գոտիները կարևոր է դիտարկել որպես՝ տնտեսական զարգացման յուրահատուկ գործիք տնտեսության աշխուժացման, օտարերկրյա ներդրումների ներգրավման, տեխնոլոգիաների ներմուծման, զբաղվածության ապահովման և միջազգային շուկաներում ինտեգրվելու ուղղությամբ:

Ազատ տնտեսական գոտիների ստեղծման հիմնական նպատակը օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման և դրա արդյունքում առաջադեմ տեխնոլոգիաների ներդրման միջոցով արտահանման ծավալների աճին, նոր աշխատատեղերի ստեղծմանն ու կայուն տնտեսական զարգացմանը նպաստելն է: Ազատ տնտեսական գոտիների գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել համապատասխան իրավական դաշտ:

Ելնելով վերոնշյալից՝ առաջարկվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստեղծել ազատ տնտեսական գոտի, ոչ թե երկրի մի որոշակի տարածքի վրա, այլ ամբողջ ԼՂՀ տարածքը հայտարարելով ազատ տնտեսական գոտի, որտեղ գործունեություն կծավալեն առաջին հերթին ԼՂՀ, ՀՀ և ԵԱՏՄ երկրների, ինչպես նաև այլ երկրների տնտեսավարող սուբյեկտները: Նոր ներդրումների և տեխնոլոգիաների մուտքը առաջատար կազմակերպությունների կողմից մեծ թափ կհաղորդի ԼՂՀ տնտեսական ու սոցիալական զարգացմանը, որի հետևանքով ոչ միայն կբարելավվեն տնտեսական ցուցանիշները, այլև կմեծանա երկրի ճանաչելիության աստիճանը և, հետևաբար օտարերկրյա ներդրումների հետագա գրավչությունը: Վերջինս կնպաստի առաջին հերթին ԱՊՀ երկրների հետ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական ու քաղաքական հարաբերությունների հաստատմանն ու բարելավմանը և ռազմավարական նշանակության տարբեր խրոնիկների լուծմանը:


Գտնում ենք, որ ԼՂՀ տարածքը ազատ տնտեսական գոտի հռչակելու և հետագայում ազատ տնտեսական գոտու գործունեության բնականոն ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ է համապատասխան իրավաօրենսդրական դաշտի ստեղծում, մասնավորապես «Ազատ տնտեսական գոտիների մասին» ԼՂՀ օրենքի նախագծի մշակում: ԼՂՀ-ում ազատ տնտեսական գոտու ստեղծումը էապես կբարելավի և խթան կհանդիսանա բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծման գործում, որն էլ կապահովի օտարերկրյա ներդրումների ծավալների կտրուկ և աննախադեպ աճին և մեր գնահատմամբ միջնաժամկետ հեռանկարում կապահովի օտարերկրյա ներդրումների ծավալների առնվազն 3-4 անգամ աճ, ինչը կարող է հետագայում ապահովել ներդրումների առավել առաջանցիկ տեմպերով աճ:

Տվյալ գլխի երրորդ բաժնում ԼՂՀ-ում օտարերկրյա ներդրումների ներգրավման կարևոր ուղղություն է դիտարկվել լիզինգային կառուցակարգերի կիրառումն ու լիզինգային հարաբերությունների զարգացումը, ինչպես նաև լիզինգի առավելություններն ու ԼՂՀ-ում դրա կիրառման հնարավորությունների վերլուծությունը:

Ներկայումս լիզինգը համարվում է ամենատարածված բիզնեսի ձևերից մեկը: Եվրոպական երկրներում ներդրումների ավելի քան 40%-ը կատարվում է լիզինգի միջոցով: Վերջին 20 տարիների ընթացքում լիզինգային գործարքների ծավալն աճել է շուրջ 10 անգամ:

Տեխնիկայի նորացման գործընթացի արագացման պայմաններում լիզինգային գործարքները հնարավորություն են տալիս առավել ակտիվ օգտագործել գիտատեխնիկական առաջընթացի նվաճումները, թարմացնել արտադրական բազան, էականորեն կրճատել սարքավորումների բարոյական մաշվածքի բացասական ազդեցությունը: Պետք է նշել, որ լիզինգը թույլ է տալիս ըստ լիզինգառուի ցանկության, ձեռք բերել գույքը այնպիսի պայմաններով, որոնք առավելագույնս համապատասխանում են նրա ֆինանսական և արտադրական հնարավորություններին:

Լիզինգային հարաբերություններն իրականացվում և կիրառական դրսևորում են ստանում լիզինգային գործարքի միջոցով, որը սխեմատիկորեն ներկայացված է գծապատկեր 4-ում:



Գծապատկեր 4. Լիզինգային գործարքի կառուցվածքը

Բերված գծապատկերում ներկայացված է լիզինգային գործարքի տիպային կառուցվածքը, որին մասնակցում են հինգ տնտեսվարող սուբյեկտներ՝ լիզինգա-

տուն, լիզինգառուն, մատակարար-վաճառողը, ֆինանսավորող ընկերությունը (առևտրային բանկ) և ապահովագրական ընկերությունը: Առանձին դեպքերում դրանք կարող են փոփոխվել կախված լիզինգառուի ցանկությունից և լիզինգային գործարքի ճյուղային առանձնահատկություններից: Այսպես, եթե լիզինգառուն ցանկություն չի ցուցաբերում ապահովագրել իր գործարքը, ապա տվյալ դեպքում ապահովագրական ընկերությունը դուրս է մնում պայմանագրային համակարգից: Իսկ եթե լիզինգային գործառնություններն իրականացվում են ռիսկային արտադրություններում, օրինակ՝ գյուղատնտեսությունում, ապա այդ դեպքում նպատակահարմար է, որպեսզի հարաբերությունների մեջ մտնի պետությունը, որպես՝ երաշխավոր:

Սույն բաժնում ներկայացված է ԼՂՀ լիզինգային շուկայում գործող «ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն» ՓԲԸ-ի իրականացրած լիզինգային գործառնությունների պայմանների վերաբերյալ տվյալները: Անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ «ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն» ՓԲԸ-ի լիզինգի սակագների պայմանները, որոնք բերված են ատենախոսության համապատասխան աղյուսակում, շատ մոտ են նաև ՀՀ լիզինգային շուկայի առաջատար «ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ-ի պայմաններին, որը զբաղեցնում է ՀՀ լիզինգի շուկայի շուրջ 80 %-ը:

ԼՂՀ տնտեսության արագ ու կայուն վերականգնման առումով հրատապ է երկրում առկա արտադրողական ներուժը թարմացնելը, վերազինելն ու արդիականացնելը: Գտնում ենք, որ այդ խնդրի լուծումն իրատեսական կհամարվի միայն լիզինգային կառուցակարգերի կատարելագործմամբ ու զարգացմամբ, ինչը հնարավորություններ կընձեռի տեղական և օտարերկրյա ներդրողներին կատարելու կապիտալ ներդրումներ:

Տվյալ գլխի չորրորդ բաժնում ԼՂՀ-ում օտարերկրյա ներդրումների ներգրավման հիմնական ուղղություն է դիտարկվել բաժնետոմսերի հրապարակային թողարկումն ու արժեթղթերի շուկաներում տեղաբաշխելը:

Օտարերկրյա ներդրումների ներգրավման կարևոր ու արդյունավետ միջոցներից է հանդիսանում ձեռնարկությունների բաժնետոմսերի թողարկումը և իրացումը համաշխարհային ֆոնդային շուկայում: Արևմտյան զարգացած երկրներում բաժնետոմսերի տեղաբաշխումը ֆոնդային շուկայում երկար ժամանակ եղել է հիմնական ֆինանսավորման գործիքներից մեկը ընկերության հետագա զարգացման համար: Ֆինանսական ռեսուրսների ներգրավումը, բաժնետոմսերի զանգվածային հրապարակման միջոցով թույլ է տալիս ձեռք բերել անհրաժեշտ ակտիվներ ընկերության ընդլայնման և արդյունավետ գործունեության համար, ինչը հնարավոր չէր լինի կազմակերպության սեփական միջոցների հաշվին:

Արդի պայմաններում ԼՂՀ տնտեսության զարգացման խնդիրներից մեկը ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուրների կազմում բաժնետոմսերի թողարկման միջոցով դրամական միջոցների ներգրավումն է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ցանկացած երկրի, այդ թվում նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսության զարգացման կարևորագույն նախապայմաններից մեկը հանդիսանում է էլեկտրաէներգիայի արտադրությունը և այն հանգամանքը, որ ԼՂՀ-ում ՀԷԿ-երի միջոցով արտադրվող էլեկտրաէներգիայի 99%-ն արտադրվում է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի կողմից, ուստի բաժ-

նետոմսերի հրապարակման միջոցով ներդրումների ներգրավման հնարավորությունները մեր կողմից դիտարկվել են հենց նշված կազմակերպության օրինակով:

Ընդհանուր առմամբ, կազմակերպությունը իրականացրել է բաժնետոմսերի 3 հրապարակային տեղաբաշխում:

Բաժնետոմսերի առաջին հրապարակային առաջարկի միջոցով 2009 թվականին ընկերությունը տեղաբաշխել է 862.074 հազար հատ բաժնետոմս, ֆինանսական շուկայից ներգրավելով 905.2 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով դրամական միջոցներ:

Երկրորդ հրապարակային առաջարկը տեղի է ունեցել 2010թ., արդյունքում տեղաբաշխվել է 1.4 մլն հատ բաժնետոմս, ներգրավված դրամական միջոցների ծավալը կազմել է 1.6 մլրդ ՀՀ դրամ:

2011թ. բաժնետոմսերի երրորդ առաջարկի միջոցով տեղաբաշխվել է թվով 3.287.926 հատ բաժնետոմս, արդյունքում ընկերության կողմից ներգրավված միջոցների ծավալը կազմել է 3.6 մլրդ ՀՀ դրամ:

Արդյունքում, կազմակերպության կանոնադրական կապիտալն աճել է 5 մլրդ. 550 մլն դրամով՝ ընդհանուր առմամբ կազմելով 10 մլրդ. 650 մլն դրամ:

Բաժնետոմսերի նշված երեք հրապարակային տեղաբաշխումների արդյունքում կազմակերպության կանոնադրական կապիտալը աճել է շուրջ 2.1 անգամ կամ 208.8 %-ով՝ 5.1 մլրդ ՀՀ դրամից հասնելով 10.7 մլրդ ՀՀ դրամ:

2013թ. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ն ԼՂՀ-ում թողարկեց 6 մլն դոլար ընդհանուր արժեքով 600 հազար փոխառության տոմսեր տարեկան 10% տոկոսադրույքով, 36 ամիս ժամկետով, որը հաջողությամբ իրացվեց և ստացված գումարների հաշվին կառուցվեցին նոր, մանր հիդրոէլեկտրակայաններ:

Ատենախոսության երրորդ՝ «Օտարերկրյա ներդրումների ներգրավման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ԼՂՀ-ում» գլխում ներկայացվել են ԼՂՀ օտարերկրյա ներդրումների ներգրավման ոլորտում կատարված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված հիմնախնդիրները, կոնկրետ կազմակերպության օրինակով հաշվարկվել է դրանց արդյունավետությունը, ինչպես նաև առաջադրվել են նշված ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղությունները 2018-2022թթ. կտրվածքով:

Ներդրումային քաղաքականության նպատակների իրականացումը ենթադրում է ոլորտի հիմնարար խնդիրների լուծում, առանց որի հնարավոր չէ իրականացնել արդյունավետ ներդրումային քաղաքականություն, ապահովել ներդրումների ծավալների աճ և երկրի տնտեսական կայուն զարգացում:

Այդ առումով անհրաժեշտ է շարունակաբար բարելավել ԼՂՀ գործարար և ներդրումային միջավայրը՝ ընկերությունների գրանցման և գործունեության իրականացման ժամանակ անհրաժեշտ վարչարարական ընթացակարգերի պարզեցման և արդյունավետության բարձրացման ու վարչարարական կառուցակարգերի կատարելագործման ճանապարհով:

Առանց համապատասխան իրավաօրենսդրական կառուցակարգերի անհնար է ստեղծել բարենպաստ ներդրումային միջավայր, ինչն էլ իրենից ներկայացնում է գլխավոր նախապայմանը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն օտարերկրյա կապիտալի զանգվածային ներհոսքի ապահովման ու խթանման:

Մինչդեռ, ակնհայտ է, որ ԼՂՀ ներդրումային քաղաքականության ոլորտի իրավական գործուն կառուցակարգերի ու հիմքերի ձևավորման հետ կապված, դեռևս բազմաթիվ անելիքներ կան:

ԼՂՀ-ում ժամանակակից ներդրումային իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ տնտեսությունում դեռևս առկա են ներդրումների գործընթացի ակտիվացմանը խոչընդոտող մի շարք գործոններ: Դրանցից հիմնականներն են՝ քաղաքական անկայունությունը, հարկային վարչարարությունը, հարկային դրույքաչափերը, մակրոտնտեսական անկայունությունը, ֆինանսական ռեսուրսների սղությունը, մրցակցության բնույթը, կոռուպցիան, մաքսային հարաբերությունները, լիցենզավորումը, օրենսդրական համակարգը և այլն:

Օտարերկրյա ներդրումների ներգրավման ոլորտի գլխավոր հիմնախնդիրները ԼՂՀ-ում հանդիսանում են ռիսկերը՝ կապված մի շարք գործոնների հետ, որն էլ ազդում է ներդրողների որոշումների վրա:

Գոյություն ունեն օտարերկրյա ներդրումների ներգրավման գործում ռիսկերի գնահատման տարբեր եղանակներ: Լայն տարածում ունի ռիսկերի գնահատման BERI ինդեքս եղանակը¹¹, որտեղ ըստ տեսակարար կշիռների դիտարկվում են 15 գործոններ, որոնց թվում են.

- ա) քաղաքական կայունությունը (3),
- բ) վերաբերմունքը օտարերկրյա ներդրումներին (1,5),
- գ) ձգտումը ազգայնացմանը (1,5),
- դ) գնաճը (1,5),
- ե) տնտեսական աճը (2,5),
- զ) աշխատավարձը (2),
- է) վճարային հաշվեկշռի վիճակը (1,5),
- ը) արժույթի փոխարկելիությունը (2,5),
- թ) բյուրոկրատական քաջքշուկները (1),
- ժ) պայմանագրային հարաբերությունները և դրանց իրականացման հնարավորությունները (1,5),
- ի) ծառայությունների որակը և մրցակցությունը (0,5)
- յ) մենեջմենթի որակը (1),
- խ) տրանսպորտային ենթակառուցվածքները (1),
- ծ) կարճաժամկետ վարկերի հուսալիությունը (2)
- կ) երկարաժամկետ փոխառությունների հուսալիությունը (2):

Յուրաքանչյուր գործոնին տրվում է միավորներ 0-ից (անընդունելի վիճակ) մինչև 4 (լավագույն վիճակ): Որից հետո բազմապատկելով յուրաքանչյուր գործոնի միավորները համապատասխան տեսակարար կշիռներով գումարվում են իրար և հաշվարկվում թվաբանական միջինը: Եթե գումարը ստացվում է 70-ից ավելի, ապա երկիրը ճանաչվում է կայուն, 55-70 դեպքում՝ մեղմ ռիսկով, որոշակի դժվարություններով, 40-55 դեպքում՝ բարձր ռիսկային անկայուն միջավայր, 40-ից ցածրի դեպքում՝ երկիրը համարվում է օտարերկրյա ներդրումների համար ոչ նպատակահարմար:

¹¹ Коваленко В. В. Инвестиции. / М. 2004. - с. 420-421

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում օտարերկրյա ներդրումների ներգրավման ոլորտում BERI ինդեքսի մեթոդով ռիսկերի գնահատման նպատակով ԼՂՀ պետական կառավարման մարմինների, բուհերի աշխատակիցների, ինչպես նաև բիզնեսի ներկայացուցիչների շուրջ 100 հոգու շրջանում մեր կողմից կատարվել են հարցումներ, կապված ներդրումային միջավայրի նպաստավորության և համապատասխան ռիսկերի ծագման հնարավորությունների հետ: Հարցումների արդյունքում BERI ինդեքսի մեթոդով հաշվարկելու արդյունքում 15 գործոնների կտրվածքով ստացված միավորները կազմել է 41.7, ինչը նշանակում է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ներդրումային միջավայրը համարվում է բարձր ռիսկային և անկայուն:

Ներդրումային գործընթացների արդյունավետ համակարգման առումով կարևոր ենք համարում հատուկ կառույցի ստեղծումը: Այն կարելի է անվանել, օրինակ հետևյալ կերպ՝ «Արցախի ներդրումային պետական գործակալություն», որը կգործի ԼՂՀ կառավարության ներքո կամ կառավարությանն առնթեր, որպես՝ երկրում ներդրումների գործընթացը համակարգող, ներդրումային քաղաքականության մշակումն ու իրականացումն ապահովող լայն լիազորություններով ու իրավասություններով օժտված պետական մարմին:

Նպատակահարմար ենք համարում նաև Արցախի ներդրումային հիմնադրամի կամ ԼՂՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության կառուցվածքներում «Օտարերկրյա ներդրումների ներգրավման հարցերի» առանձին բաժնի ստեղծումը, որը միայն կզբաղվի երկրում օտարերկրյա ներդրումների ներգրավման հիմնահարցերով և օտարերկրյա ներդրողներին կտրամադրի տեղեկատվական բնույթի անվճար ծառայություններ բիզնես միջավայրի, ներդրումային հնարավորությունների և համապատասխան օրենսդրության մասին, ներդրողների համար կկազմակերպի այցելություններ իրավիճակին ծանոթանալու համար, կիրականացնի համապատասխան աջակցություն ներդրումային ծրագրերի իրականացման գործընթացներին և ԼՂՀ տարբեր գերատեսչությունների հետ համագործակցության հաստատմանը, ինչպես նաև համապատասխան ունակություններով կադրային ներուժի ապահովմանը և այլն: Նշված կառույցը կզբաղվի նաև օրենքների մշակմամբ և իրավական հիմքերի կատարելագործմամբ, միջազգային փորձի ուսումնասիրությամբ և համապատասխան կառուցակարգերի մշակմամբ, ինչպես նաև պետության օտարերկրյա ներդրումային ծրագրերին մասնակցության հնարավոր տարբերակների, մոտեցումների ու արդյունավետ կառուցակարգերի մշակմամբ: «Օտարերկրյա ներդրումների ներգրավման» առանձին բաժնի առկայությունը իրապես կնպաստի օտարերկրյա ներդրումների ներգրավման հարցում էական դրական տեղաշարժի ապահովմանը և միջնաժամկետ հեռանկարում մեր գնահատմամբ կապահովի օտարերկրյա ներդրումների ծավալների առնչվազն 25-30% աճ, մասնավորապես 2015 թվականի 6.6 մլրդ. դրամի մակարդակից 2020 թվականին կհասնի շուրջ 8.3-8.6 մլրդ. դրամի:

Ատենախոսության երրորդ գլխի երկրորդ բաժնում ԼՂՀ-ում գործող կազմակերպության օրինակով գնահատվել է օտարերկրյա ներդրումների արդյունավետությունը:

ԼՂՀ-ում օտարերկրյա ներդրումների տնտեսական արդյունավետությունը գնահատվել է գերմանական Best Metals ընկերության օրինակով, որի տվյալների հիման վրա հաշվարկվել են հետևյալ ցուցանիշները.

1. Դիսկոնտավորված կամ ընթացիկ արժեքը (PV):

Այն որոշվում է հետևյալ բանաձևով.

$$PV = R_1(1+E) + R_2(1+E)^2 + R_3(1+E)^3 + R_4(1+E)^4 + R_5(1+E)^5 + R(1+E)^n = \sum R_1(1+E)^n$$

Որտեղ 1,2,3.....n տարիներն են, որոնցում սպասվում են ամենամյա եկամուտները՝ $R_1 R_2 R_3 \dots R_n$

տեղադրելով արժեքները կստանանք

$$PV = 7(1+0,12) + 7(1+0,12)^2 + 8(1+0,12)^3 + 10(1+0,12)^4 + 10(1+0,12)^5 = 7,84 + 8,78 + 11,73 + 15,73 + 17,62 = 61,12$$

2. Մաքուր դիսկոնտավորված եկամուտը (NPV):

Այն որոշվում է հետևյալ բանաձևով.

$$NPV = PV - CL,$$

Որտեղ CL կապիտալ ներդրումներն են: Տեղադրելով արժեքները կստանանք.

$$NPV = PV - CL = 61,12 - 50 = 11,12$$

Մաքուր դիսկոնտավորված եկամուտը դրական է: Հետևապես, տնտեսական վերագինման համար կատարվող ներդրումները նպատակահարմար է:

3. Եկամտաբերության ինդեքսը (PL):

Այն որոշվում է հետևյալ բանաձևով.

$$PL = \frac{PV}{CL} = \frac{61,12}{50} = 1,2224$$

Եկամտաբերության ինդեքսը մեծ է 1-ից, ինչը վկայում է այն մասին, որ տնտեսապես նպատակահարմար է կատարել ներդրումներ:

4. Արդյունավետության նորման (YRR):

Հայտնի է, որ արդյունավետության նորման որոշվում է ընտրանքային եղանակով, այնպես, որ PV-ն մոտավորապես հավասար լինի CL-ին: Վերցնելով տարբեր դիսկոնտներ համոզվում ենք, որ ներդրման նորման հավասարվում է 30-35% դիսկոնտի: Նույն կերպ կարելի է հաշվարկել այլ ընկերությունների համար՝ զբոսաշրջության, հեռահաղորդակցության և այլ ոլորտներում:

Հարկ է նշել նաև, որ ներդրումները բացի առևտրային ցանկալի արդյունքից ապահովում են նաև սոցիալական, հարկային, բյուջետային և էկոլոգիական արդյունքներ:

Չնայած այն հանգամանքին, որ ԼՂՀ-ում օտարերկրյա ներդրումները ներգրավվում են խիստ անբարենպաստ պայմաններում կապված խոցելի աշխարհաքաղաքական պայմաններում գործելու հետ, այնուամենայնիվ ուսումնասիրությ-

յունները և կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ դրանց արդյունավետությունը նշանակալիորեն բարձր է:

Ատենախոսության երրորդ գլխի երրորդ բաժնում մշակվել են ԼՂՀ օտարերկրյա ներդրումների ներգրավման պետական քաղաքականության հիմնական ուղղությունները 2018-2022թթ. կտրվածքով:

Ներդրումային քաղաքականության բարեփոխումների ուղղությամբ անհրաժեշտ է տանել նպատակաուղղված և հետևողական աշխատանք՝ ներդրումների իրականացմանը նպաստող գործուն, արդյունավետ և թափանցիկ համակարգի ապահովման, ներդրումների իրավական կարգավորման շրջանակի բարելավման և արդիականացման, ներդրումային գործունեությանն առնչվող միջազգային լավագույն չափանիշների և փորձի կիրառման ուղղությամբ: ԼՂՀ-ում անհրաժեշտ է իրականացնել համապարփակ բարեփոխումներ՝ երկրում օտարերկրյա ներդրումները և տեղական մասնավոր հատվածի համար դրանից բխող օգուտները խթանելու նպատակով: Այդպիսով հաշվի կառնվեն ազգային տնտեսական և սոցիալական զարգացման նպատակները, ինչպես նաև կվերացվեն ներդրումների հետ կապված հիմնական խոչընդոտները, որոնց լուծմանը մեր համոզմամբ կնպաստի ԼՂՀ Կառավարության կողմից օտարերկրյա ներդրումների ներգրավման առավել համակարգային և վերջնական արդյունքին միտված պետական քաղաքականության մշակումն ու իրագործումը:

Օտարերկրյա ներդրումների ներգրավման և խրախուսման ռազմավարությամբ պետք է հստակ ամրագրվեն ու սահմանվեն դրանց ներգրավման համար անչափ կարևոր այնպիսի դրույթներ, ինչպիսիք են.

- երկրի տնտեսական քաղաքականության նպատակների իրագործման հարցում օտարերկրյա ներդրումների նշանակության և դրանց կարևորության ձևակերպումը,
- օտարերկրյա ներդրումների ներգրավման ոլորտում ներգրավված հիմնական պետական մարմինների լիազորությունների ու պարտականությունների սահմանումը,
- օտարերկրյա ներդրումների ներգրավման գերակա ոլորտների սահմանումը,
- օտարերկրյա ներդրումների ներգրավման թիրախների և ակնկալվող օգուտների (ներդրումները՝ արժեքային արտահայտությամբ, ստեղծված աշխատատեղերը, ներգրավված տեխնոլոգիաները և այլն) ներկայացումը,
- օտարերկրյա ներդրումների իրականացման տարեկան ծրագրի մշակման կառուցակարգերի ներդրումը,
- մոնիթորինգի ու գնահատման համակարգի և ներդրողների հետ աշխատանքի համակարգի ներդրում, ինչը հնարավորություն կընձեռի կառավարությանը վերահսկել օտարերկրյա ներդրումների ռազմավարական նպատակների իրականացման վիճակը և չափել ներդրումների ներգրավման ուղղությամբ կառավարության կատարած ծախսերի արդյունավետությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են տվել վերլուծել և գնահատել օտարերկրյա ներդրումների դերը ԼՂՀ տնտեսության զարգացման

գործում, ինչպես նաև բացահայտել դրանց ներգրավման հիմնախնդիրները, որոնք հնարավորություն են տվել առենախոսության թեմայի շրջանակներում կատարելու որոշակի եզրակացություններ:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը որպես չճանաչված հանրապետություն գտնվում է բարդ և անբարենպաստ աշխարհաքաղաքական պայմաններում: Երկրի սեփական միջոցները չեն բավարարում տնտեսության բնականոն զարգացման համար, ուստի օտարերկրյա ներդրումների ներգրավումը դառնում է հրատապ խնդիր, որի լուծման նպատակով պետության կողմից իրականացվող միջոցառումների շնորհիվ 2000 թվականից սկսվեց օտարերկրյա ներդրումների ներհոսքը ԼՂՀ և հետագա տարիներին նկատվեց վերջինիս կայունացման ու աճի միտում: Օրինակ, 2003 թվականին օտարերկրյա ուղղակի ներդրումները տնտեսությունում նախորդ տարվա համեմատ ավելացան 60 %-ով՝ կազմելով 40 մլն դոլար:

2. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ օտարերկրյա ներդրումների դինամիկան 2008-2015թթ. ըստ ճյուղերի և շրջանների համաչափ չէ: 2013 թվականին գյուղատնտեսության, 2013-2014թթ.՝ տրանսպորտի և կապի, ինչպես նաև առևտրի ոլորտներում օտարերկրյա ներդրումներ չեն իրականացվել: Սակայն, դրանք կտրուկ աճել են արդյունաբերությունում և շինարարությունում՝ 2014 թվականին կազմելով համապատասխանաբար՝ 1794.7 և 7987.8 մլն դրամ: Ստեփանակերտում ներդրումների բարձր աճ գրանցվել է 2012թ.՝ 6769 մլն ՀՀ դրամ: Ասկերանում 2015 և 2013 թվականներին օտարերկրյա ներդրումներ չեն կատարվել, իսկ 2014 թվականին նշված ցուցանիշը կրտրուկ աճել է կազմելով 4216.3 մլն դրամ, իսկ Հաղորդում 2013-2014թթ. ներդրումները բացակայում են: Մարտակերտում 2013թ. նույնպես ներդրումներ չեն կատարվել: Շուշիում 2012 թ. կազմել են 41.8 մլն դրամ, իսկ 2014թ.՝ 58.8 մլն դրամ: Օտարերկրյա ներդրումների իրականացման վերը նշված անհամաչափ դինամիկան հիմնականում բացատրվում է երկրի բարդ քաղաքական իրավիճակով և մի շարք չլուծված հիմնախնդիրների առկայությամբ:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կառավարման մարմինների, բուհերի աշխատակիցների, ինչպես նաև քիզնեսի ներկայացուցիչների շուրջ 100 հոգու շրջանում մեր կողմից կատարվել են հարցումներ, կապված երկրում ներդրումային միջավայրի նպաստավորության հետ: Հարցումների արդյունքում ստացված պատասխանները 0-4 միջակայքով բալային գնահատականների տեսքով տեղադրվել են BERI ինդեքսում, որտեղ ըստ տեսակարար կշիռների դիտարկվել են 15 գործոններ և ըստ դրա գնահատվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ներդրումային միջավայրի նպաստավորության աստիճանը: Արդյունքում պարզ է դարձել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ներդրումային միջավայրը համարվում է բարձր ռիսկային և անկայուն, քանի որ նշված մեթոդով գնահատման արդյունքում ներդրումային միջավայրի բալային գնահատականը կազմել է 41.6: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել նաև, որ երկրի բնակչությունը բավականին դրական է վերաբերվում բոլոր օտարերկրյա ներդրողներին, անկախ այն հանգամանքից, թե ինչ երկրներ են դրանք ներկայացնում:

4. ԼՂՀ օտարերկրյա ներդրումների ներգրավման ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման համատեքստում կարևորվում է «Օտարերկրյա ներդրումների մասին» ԼՂՀ օրենքի կատարելագործումը: Մասնավորապես, հարկ է օրենսդրորեն

ամրագրել տեղական և օտարերկրյա ներդրողների համար հավասար և բարենպաստ օրենսդրական դաշտի ստեղծումը: Օրենսդրական դաշտի բարելավումը և դրա արդյունավետ կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ու իրավական նորմերի ընդունումը հնարավորություն կտա ավելի հստակեցնել ներդրումները կարգավորող օրենսդրական դաշտը, հնարավորինս կրճատել վարչարարական խոչընդոտների առաջացման հնարավորությունները և կտեղծի լրացուցիչ ու արդյունավետ երաշխիքներ օտարերկրյա ներդրողների համար: Իրավական և վարչական բարեփոխումների գործընթացի արդյունքում մեր գնահատմամբ էսպես կրեյվալի երկրում օտարերկրյա ներդրումների ներգրավման վիճակը:

5. Կարևոր է համարվում մաքսային և հարկային քաղաքականության կատարելագործումը՝ այն համապատասխանեցնելով տնտեսվարող սուբյեկտների և գործարար շրջանակների շահերի հետ, ինչը կնպաստի և՛ գործարարների, և՛ նոր ներդրողների վստահությանը երկրի ներդրումային հնարավորություններին: Այն հնարավորություն կտա երկրի ներսում ճիշտ գնահատել ներդրումային ներուժը, իսկ միջազգային ֆինանսական կազմակերպություններին և առանձին ներդրողներին թույլ կտա պատշաճ ներկայացնել երկրի ներդրումային գրավչությունը:

6. Երկրի տնտեսության տարածքային անհամաչափ զարգացումից խուսափելու համար հարկ է իրականացնել համալիր միջոցառումներ՝ շրջանների ներդրումային ծրագրերի խրախուսման նպատակով (տնտեսական ենթակառուցվածքների, կապի և հաղորդակցման ոլորտի զարգացում, արտոնությունների նոր համակարգի կիրառում): Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է մշակել և իրականացնել տարածքային զարգացման համալիր ծրագրեր, որոնք, հաշվի առնելով տվյալ շրջանի բնատնտեսական և պատմամշակութային ներուժն ու առանձնահատկությունները, հնարավորություն կտան բոլոր շրջաններում ապահովելու բարենպաստ ներդրումային միջավայր, դրանով իսկ խթանելով ԼՂՀ տարածքային համաչափ զարգացումը:

7. Չնայած այն հանգամանքին, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում օտարերկրյա ներդրումները ներգրավվում են խիստ անբարենպաստ պայմաններում կապված խոցելի աշխարհաքաղաքական պայմաններում գործելու հետ, այնուամենայնիվ ուսումնասիրությունները և կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ դրանց արդյունավետությունը նշանակալիորեն բարձր է: Մասնավորապես, վերջինիս մասին են վկայում երկրի ամենախոշոր հարկատու համարվող գերմանական BEST METALS կազմակերպության օրինակով կատարված հաշվարկները:

8. Հաշվի առնելով օտարերկրյա ուղղակի ներդրումների ժամանակակից միտումները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կարևոր ենք համարում ներդրումների տեսակարար կշռի առաջընթաց աճը գիտատար ճյուղերում: Վերջինս, կհանգեցնի երկրի տնտեսական կառուցվածքի փոփոխությանը, աստիճանաբար կնվազի բնական ռեսուրսների և էժան աշխատուժի դերը, իսկ այդ համատեքստում որոշիչ կդառնա բարձրակարգ մասնագետների առկայությունը, գիտահետազոտական հաստատությունների և համապատասխան ենթակառուցվածքների զարգացվածությունը: Առանձնակի ուշադրություն պետք է դարձվի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և դրա լայնածավալ կիրառման վրա, որը կարող է հանդիսանալ նաև երկրի մրցակցային առավելությունների բարելավման

հիմնական ուղղություններից մեկը, և պետք է համարվի տնտեսության զարգացման պետական քաղաքականության ռազմավարական առաջնահերթությունների բաղկացուցիչը:

9. Շուկայական հարաբերություններին անցնելուց հետո, մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով, ԼՂՀ-ում գործող կազմակերպությունների մեծ մասը հայտնվել են ֆինանսատնտեսական ծանր վիճակում, որոնք չեն կարողանում ձեռք բերել առաջավոր տեխնիկա և տեխնոլոգիա, արդիականացնել արտադրությունը և իրականացնել բնականոն գործունեություն: ԼՂՀ տնտեսության արագ ու կայուն վերականգնման առումով հրատապ է երկրում առկա արտադրողական ներուժը թարմացնելը, վերազինելն ու արդիականացնելը: Գտնում ենք, որ այդ խնդրի լուծումն իրատեսական կհամարվի միայն լիզինգային կառուցակարգերի կատարելագործմամբ ու գործադրմամբ, ինչը, ստեղծելով բարենպաստ պայմաններ, հնարավորություններ կընձեռի թե՛ տեղական, թե՛ օտարերկրյա ներդրողներին կատարելու կապիտալ ներդրումներ: Տեխնիկայի նորացման գործընթացի արագացման պայմաններում լիզինգային գործարքները հնարավորություն կտան առավել ակտիվորեն օգտագործել գիտատեխնիկական առաջընթացի նվաճումները և թարմացնել արտադրական բազան:

10. Ելնելով ԼՂՀ տնտեսության զարգացման գործում օտարերկրյա ներդրումների չափազանց մեծ նշանակությունից, ներդրումների ներգրավման առաջնային ու արդյունավետ կառուցակարգ ենք համարել երկրի տարածքը ազատ տնտեսական գոտի հռչակելը: Ազատ տնտեսական գոտու գործունեության բնականոն ընթացքն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ առաջարկվում է համապատասխան իրավօրենսդրական դաշտի ստեղծում, մասնավորապես «Ազատ տնտեսական գոտիների մասին» ԼՂՀ օրենքի նախագծի մշակում: Ազատ տնտեսական գոտու ստեղծումը էապես կբարելավվի և խթան կհանդիսանա բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծման գործում, որն էլ կապահովի օտարերկրյա ներդրումների ծավալների կտրուկ և աննախադեպ աճին և մեր գնահատմամբ միջնաժամկետ հեռանկարում կապահովի օտարերկրյա ներդրումների ծավալների առնվազն 3-4 անգամ աճ, ինչը կարող է հետագայում ապահովել ներդրումների առավել առաջանցիկ տեմպերով աճ:

11. Մեր կողմից նպատակահարմար է համարվել Արցախի ներդրումային հիմնադրամի կամ ԼՂՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության կառուցվածքներում «Օտարերկրյա ներդրումների ներգրավման հարցերի» առանձին բաժնի ստեղծումը: Առանձին բաժնի կարգավիճակով վերջինիս գործունեությունը իրապես կնպաստի օտարերկրյա ներդրումների ներգրավման հարցում էական դրական տեղաշարժի ապահովմանը և միջնաժամկետ հեռանկարում մեր գնահատմամբ կապահովի օտարերկրյա ներդրումների ծավալի 15-20% աճ՝ 2015 թվականի 6.6 մլրդ. դրամի մակարդակից 2020 թվականին կհասնի շուրջ 7.6-7.9 մլրդ. դրամի:

12. Ներդրումային քաղաքականության բարեփոխումների ուղղությամբ անհրաժեշտ է տանել նպատակաուղղված և հետևողական աշխատանք՝ ներդրումների իրականացմանը նպաստող գործում, արդյունավետ և թափանցիկ համակարգի ապահովման, ներդրումների իրավական կարգավորման շրջանակի բարելավման և արդիականացման, ներդրումային գործունեությանն առնչվող միջազգային լավա-

գույն չափանիշների և փորձի կիրառման ուղղությամբ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում անհրաժեշտ է իրականացնել համապարփակ բարեփոխումներ՝ երկրում օտարերկրյա ներդրումները և տեղական մասնավոր հատվածի համար դրանից բխող օգուտները խթանելու նպատակով: Այդպիսով հաշվի կառնվեն ազգային տնտեսական և սոցիալական զարգացման նպատակները, ինչպես նաև կվերացվեն ներդրումների հետ կապված հիմնական խոչընդոտները, որոնց լուծմանը մեր համոզմամբ կնպաստի ԼՂՀ Կառավարության կողմից օտարերկրյա ներդրումների ներգրավման առավել համակարգային և վերջնական արդյունքին միտված պետական քաղաքականության մշակումն ու իրագործումը:

Ատենախոսության հիմնական դրույթները և ստացված արդյունքները արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Վերդյան Ս. Վ., Պետրոսյան Ս. Ա., Արտասահմանյան ներդրումների ներգրավման անհրաժեշտությունը ԼՂՀ էկոնոմիկայում: // Մարզերի զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Հանրապետական գիտաժողովի նյութեր: ԵՊՏՀ - Եղեգնաձոր, դեկտեմբեր, 2013. - էջ 190-193
2. Вердян Т.В., Инвестиции – источник ускорения экономического роста Арцаха: // Материалы X mezinarodni vedecko – prakticka konference: «Moderni vymoznenosti vedy - 2014» Dil 7. Praha Publishing House «Education and Science» s.r.o Sefredaktor: Prof. JUDr Zdenek Cernak, page 69-71
3. Վերդյան Ս. Վ., Արզումանյան Ֆ. Ա. Ազատ տնտեսական գոտիների ստեղծումը որպես ներդրումների խթանման պայման: // Ֆինանսներ և էկոնոմիկա, # 5-6 (177-178), հունիս, 2015. – էջ 75-76
4. Վերդյան Ս. Վ., Լիզինզը՝ որպես ներդրումների տեսակ և դրա օգտագործման անհրաժեշտությունը ԼՂՀ-ում: // Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում գիտական հոդվածների ժողովածու, 2016. - էջ 182-186
5. Պետրոսյան Ս. Ա., Վերդյան Ս. Վ. Օտարերկրյա ներդրումների անհրաժեշտությունը և դրանց ներգրավման դինամիկան ԼՂՀ տնտեսությունում: // Ֆինանսներ և էկոնոմիկա, # 5-6 (189-190), հունիս, 2016. – էջ 91-92
6. Վերդյան Ս. Վ. Զրոսաշրջության զարգացման հեռանկարներն Արցախում: // Материалы международной научной конференции, посвященной 85-летию Национального аграрного университета Армении, НАУА, Ереван, Изд-во НАУА, 2016. – с. 266-268

**Роль иностранных инвестиций в деле развития хозяйства НКР и
проблемы их привлечения**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности: 08.00.02 – «Экономика и управление хозяйством, его сферами».

Публичная защита диссертации состоится 3-го апреля 2018 года в 14⁰⁰ часов на заседании Специализированного Совета 002 по экономике ВАК РА, действующего в Национальном аграрном университете Армении, по адресу: 0009, Ереван, ул. Теряна 74.

РЕЗЮМЕ

Целью исследования является научное обоснование и разработка стратегии привлечения иностранных инвестиций и принципов государственной политики, их научное обоснование и разработки, что будет способствовать обеспечению ускорения социально-экономического развития страны.

Исследование состояния экономики НКР показывает, что для привлечения иностранных инвестиций существует ряд проблем, решение которых крайне необходимо для дальнейшего развития страны. К ним относятся неблагоприятная инвестиционная среда и несовершенное правовое поле, недоразвитость финансовых и рыночных инфраструктур. Важно совершенствование налоговой и таможенной политики и ее соответствие интересам хозяйствующих субъектов и деловых кругов, что будет способствовать их уверенности в инвестиционных возможностях страны.

Проведенные в диссертации исследования и их анализ повели к ряду научных результатов, из которых научной новизной можно считать следующие:

- разработаны и предложены концептуальные направления государственной политики привлечения иностранных инвестиций на 2018-2022 гг.

- выявлены существующие риски в деле реализации инвестиционных инвестиций в реальный сектор экономики НКР и методом индекса BERI оценена привлекательность инвестиционной среды в НКР,

- оценена социально-экономическая эффективность иностранных инвестиций на примере действующей в НКР организации,

- выявлены проблемы, существующие в сфере привлечения в НКР иностранных инвестиций и предложены основные пути и возможности их решения.

В первой главе диссертации – “Состояние экономики и иностранные инвестиции в НКР” представлены состояние экономики НКР, макроэкономические показатели и объемы реализации иностранных инвестиций и обоснована необходимость привлечения иностранных инвестиций.

Во второй главе – “Основные направления иностранных инвестиций и их законодательные основы в НКР” исследованы законодательные основы обеспечения привлекательности иностранных инвестиций, на основе которых предложены основные направления и механизмы иностранных инвестиций в НКР.

В третьей главе- “Проблемы привлечения иностранных инвестиций и пути их решения в НКР” представлены проблемы выявленные в результате исследований в сфере привлечения иностранных инвестиций, на примере конкретной организации рассчитана их эффективность, а также предложены основные направления государственной политики в данной сфере в разрезе на 2018-2022 гг.

Научно-практическое значение диссертации заключается в том, что она развивает основные подходы к разработке государственной политики привлечения иностранных инвестиций в стране с особыми геополитическими условиями.

Основные положения диссертации можно использовать в дальнейшем осуществлении научно-исследовательских работ в сфере привлечения иностранных инвестиций, а также в качестве научно- методической базы для нормативных юридических документов, при разработке соответствующей государственной политики.

**The role of foreign investment in the development of the NKR economy
and the issues of their attraction**

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of economics in the speciality 08.00.02 – «Economics and Management of Economy and its Spheres»

The defense of the thesis will take place on 18 July 2017, at 12.00 o'clock at the Meeting of 002 specialized Council in Economics of SCC RA, operating at National Agrarian University of Armenia by address, 74 Teryan street, Yerevan, 0009

SUMMARY

The purpose of the research is to promote the foreign investment attraction strategies and principles of state policy in the NKR economy and the relevant scientific substantiation and development that will contribute to the acceleration of socio-economic development of the country.

The study of the state of the NKR economy shows that there are a number of problems for the attraction of foreign investments, the solution of which is extremely necessary for the further development of the country. These issues relate to the non-favorable investment environment, the non-perfect legal framework for attracting foreign investments, the underdeveloped financial and market infrastructure. It is important to improve the customs and tax policies that will bring it in line with the interests of business entities and business circles, which will boost the confidence of entrepreneurs and investors into the country's investment opportunities. It will give an opportunity to correctly assess the investment potential inside the country, and will allow international financial institutions and individual investors to adequately represent the country's investment attractiveness.

The research and analysis conducted in the thesis have led to a number of scientific outcomes, from which scientific novelty can be considered as follows:

- Developed and nominated conceptual directions of state policy in the field of attracting foreign investments in 2018-2022,

- The risks existing in the real sector of the NKR economy have been revealed and the BERI index method has been assessed by the attractiveness of the investment environment in the NKR,

- The socio-economic efficiency of foreign investments was assessed by the example of an organization functioning in the NKR,

- Revealed the key issues in the field of attraction of foreign investments of the NKR and the main directions and opportunities for their solution are nominated.

The first chapter in the thesis, "Economic Situation and Foreign Investments in the NKR", describes the state of the NKR economy, the macroeconomic indices and the volume of foreign investments, and the necessity of attracting foreign investments.

In the second chapter of the thesis, "The main directions and legislative bases of attracting foreign investments in the NKR" have been studied by the legislative basis for ensuring the attractiveness of foreign investments, based on which the main directions and mechanisms of attracting foreign investments in the NKR were nominated.

The third chapter of the thesis: "Issues of attracting foreign investments and ways of their solution in the NKR" presented the problems revealed in the field of attraction of foreign investments in NKR, the effectiveness of which was calculated by the example of a particular organization, as well as the main directions of the state policy in this field were proposed in 2018-2022.

The scientific significance of the thesis is that it develops key approaches for the development of state policy on attraction of foreign investments in a country with special geopolitical conditions. The main provisions of the thesis can be used in future research activities in the field of investment, particularly in the area of attraction of foreign investments, as well as scientific-methodical base, normative legal documents, as well as elaboration of corresponding state policy.